



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԶՐԱՅԻՄԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԶՐԱՅԻՄԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ԹԻԻ 40

14/27 ԱՊՐԵԼ, 1912


ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԻԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԵՆ ԵՆ
ՏՈՒՐՈՒ
ԿԵՆՈՒ





ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆՍԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱՐԱԹԱԹԵՐԹ

Երկրորդ տարի : 14/27 Ապրիլ : Թիւ 40

ՅԵՏ Ա. ՅԱՐՈՒԹԵԱՆ

ԵՐԵՒԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ Ի ԳԱԼԻԼԻԱ

(Շար. եւ Վերջ)

Ասկայն ինչո՞ւ մանաւանդ յարութենէն վերջը կ'ըսէ թէ՝ Տրուեցաւ ինծի ամէն իշխանութիւն, քան թէ յարութենէն առաջ : Կ'ըսեմ թէ Սր. Գրոց մէջ սովորութիւն է ըսել թէ բան մը կ'ըլլայ՝ երբ ան առաջին տեղում երեւան գայ : Արդ Յիսուսի ամենակարողութիւնը յարութենէն առաջ ա՛յնչափ չյայտնուեցաւ, թէեւ ունէր զայն. այլ ա՛ն առին առաւելապէս յայտնի եղաւ. երբ նա կրցաւ ամբողջ աշխարհը զարձի բերել : Հնար է նաեւ ըսել թէ իշխանութիւնը ցոյց կուտայ նախաթողութեան պաշտօն մը, ինչպէս կ'ըսենք աշխարհի իշխանաւորներուն համար. հոս այս կերպով կ'առնուի իշխանութիւնը : Քանզի ստոյգ է որ Քրիստոս որ իբր Որդի Աստուծոյ, ի յաւիտենից ունէր տիեզերաց թագաւորութիւնը,

անոր գործադրութիւնն ընդունուեցաւ յարութեանը ժամանակ . իբրեւ թէ ըսէր. «Արդէն ստացած եմ այդ իշխանութիւնը» : Ասոր վրայ կը կարգանք Դանիէլի մէջ (Է. 26) . «Ասեան պիտի նստի . անոր իշխանութիւնը պիտի փոխուի, իսպառ ապականելու եւ կորուսանելու համար . ու երկնքի ներքեւ զննող քաղաւորներու քաղաւորութիւնն ու մեծութիւնը տրուեցաւ Բարձրեան Աստուծոյ սուրբերուն, եւ անոր քաղաւորութիւնը յաշիւեակալն ու պիտի հնազանդի» : Որով կ'իմացուի արդիւնական եւ իրական գերազանցութիւն մը, ինչպէս երբ որդիքն բարձրանայ այն իշխանութեան գործածութեանը՝ զոր ի ծննդենէն ունէր . «Զննուած Գառնը արժանի է առնելու մեծութիւնն եւ իմաստութիւնը եւ զօրութիւնը եւ պատիւը եւ փառքը եւ օրհնութիւնը» (Յայտ. Ե. 12) :

Գնացե՛ք ասկից վերջը, աշակերտեցե՛ք ամեն հեթանոսները : Հոս կը յանձնէ պաշտօնը . եւ երեք տեսակ : Նախ՝ սորվեցնելու . երկրորդ՝ մկրտուելու . երրորդ՝ դաստիարակելու ի բարոյս : Հետեւաբար կ'ըսէ . Սշակերտեցե՛ք ամեն ազգերը . իբրեւ թէ ըսէր . «Տրուած է ինծի ամէն իշխանութիւն, որ ոչ միայն Հրեայք, այլ եւ հեթանոսներն ինծի դառնան . ուստի ժամանակն հասած ըլլալով, Գացե՛ք ու սորվեցուցե՛ք : Ինչպէս որ դրոսի լեզ գիտ Հայր, նոյնպէս ես ալ գտնեմ կը որկեմ (Յովհ. Ի. 21) . Եւ Ղուկ. ԻԲ. 29 . «Եւ ես կը խոստանամ ձեզի զարթոյնքի, ինչպէս իմ Հայրս խոստացաւ ինծի» : Եւ կ'ըսէ . Գնացե՛ք ու սորվեցուցե՛ք . քանզի այս է առաջին բանը որուն մէջ կը պարտինք հրահանգուիլ, այսինքն՝ հաւատքի մէջ . քանզի «Առանց հաւատքի անկարելի է Աստուծոյ հաճոյանալ» երբ . Թ. 6) : Ասոր համար է որ Ս. Եկեղեցին սովորութիւն ունի ամէն բանէ առաջ երախտները հրահանգել հաւատարեաց մէջ . Եւ իր սուած իշխանութեամբ կը զրկէ ամէն ազգերու . սորվեցուցե՛ք ամեն ազգերու : «Իրի թեմաք կը զրկէ ամէն ազգերու . որպէս զի փրկութիւն ըլլաւ միկնել աշխարհի ծայրերը» (Ես. ԽԹ. 6) :

Եւ հաւատարեաց մէջ հրահանգելէն յետոյ, մկրտուելու պաշտօնը կուտայ . Մկրտեցե՛ք զանոնք . իբրեւ թէ ըսէր . Արժանապատուութեան մը բարձրացողին պէտք է զայն լաւ մը հասկցնել, որպէս զի վերջը անոր յարգը գիտնայ : «Ինչ որ ի Բրիստոս մկրտեցաք, գրիստոս նազուեցաք» (Փաղ. Գ. 27) : Իսկ մկրտութեան ձեւն է՝ Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ : Բրիստոսի մէջ երկու բան կայ . մարդկութիւն եւ Աստուածութիւն : Մարդկութիւնը ճամբայ է եւ ոչ վախճան . «Ես եմ ճամբայ ու նշխարութիւն ու կեանք» (Յովհ. Ժ. 6) . ճամբարութիւն՝ իբրեւ վախճան տեսլականի . կեանք՝ իբրեւ վախճան գործնականի : Չեմ ուզեր որ ճամբու վրայ, այս է՝ մարդկութեան մէջ մնաք, այլ աւելի ներսը թափանցե՛ք՝ աստուածութեան . անոր համար հարկ էր երկոքին նշանակութիւն, մարդկութիւն եւ Աստուածութիւն : Մկրտութեամբ՝ մարդկու-


թիւն. «Մկրտաբանն ձեռնով անոր հետ քաղաքացանքի վնահ» (Հռ. 9. 4). և խօսքերուն ձեռքով՝ Աստուածութիւնն. այնպէս որ սրբութիւնն աստուածութեան ձեռքովն է. ոչր վասն և կ'ըսէ. Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. եւ պատճառն է որ մկրտութեամբ կ'ըլլայ վերստին ծրնունդ. որ կ'ըլլայ առ Հայրն Աստուած, ինչպէս կ'ըսէ Առաքեալը (Հռ. Ը. 29). «Զանոնք որ առաջուրեկ գիտցաւ, նախասահմանեց զանոնք իր Որդոյն պատկերին կերպորանակից ըրարաւ»: եւ Յովհ. Ա. 12. «Տուաւ անոնց Աստուծոյ որդիներ ըրարաւ իշխանութիւն, անոնց ուր հաւատասաւ անոր անուան»: եւ այս կ'ըլլայ Աստուծոյ Որդւոյն ձեռքով. Գաղ. Դ. 4. «Դրկեց Աստուած իր Որդին... որպէս զի մեկն որդեգրութիւն ընդունիմք»: եւ ասոր միջոցն է Հոգւոյն Սրբոյ պարգեւը. «Քանզի չառիք ծառայութեան հոգին, դարձեալ վախճարաւ հաւար. այլ առիք որդեգրութեան հոգին» (Հռ. Ը. 15): Ահա ասոր համար պէտք եղաւ յիշել Հայրը, Որդին ու Հոգին Սուրբ: եւ կ'ըսուի՝ Յանուն. այսինքն՝ անունը կոչելով, կամ անունն զօրութեամբ՝ զի զօրաւոր է. «Եւ դու մեր մեջն ես, ո՛ր Տէր, եւ քու անունդ կոչուած եմք մեր փայ. մի՛ մոռնար զմեզ» (Երեմ. ԺԴ. 9): Դարձեալ կ'ըսէ՝ Յանուն, և ոչ Յանուան. և ամօթապարտ կ'ըլլան հերետիկոսութիւններն որոնք զանազանութիւն կը դնեն աստուածային անձանց ընդմեջ. և կը դատապարտուի նաեւ Սրիոս, վասն զի անձանց հաւասարութիւնը կը նշանակուի եզակի բառով:

«Սորվեցողքի՛ իրենց պահել այն ամեն բանը զոր ձեզի պատկերեցի»: Փրկութեան համար կը բաւէ՝ միթէ հաւատալ ու մկրտուիլ. ո՛չ, այլ կը պահանջուի նաեւ բարեկենցաղ ըլլալ. անոր համար կ'ըսէ. Իմ պատուիրաններս պահելը սորվեցուցէք»: «Դու պատկերեցիր քու պատկերանկերդ, որպէս զի ես խօսիւ պահեմ զանոնք» (Սղմ. ԶԺԸ. 4): եւ կ'ըսէ. ինչ որ պատկերեցի, և ոչ թէ՛ ինչ որ խորհուրդ տուի. ոչր վասն և ըսաւ. «Ինչ որ ձեզի կ'ըսեմ. ամենուն կ'ըսեմ» (Մատթ. ԺԳ. 37):

Ապա կը յաւելու երրորդը. «Եւ անա եւ ձեզի հետ եմ, ամեն օր միմեզ. աշխատիս վերջը»: Հոս կը խոստանայ օգնութիւն. ուստի կը պատասխանէ ըսողներուն թէ Դու կը զրկես որ սորվեցնենք ամենուն. մենք այս բանիս կարող չենք: Մի՛ վախճաք. որովհետեւ ես ձեզի հետ եմ: Եւ զխեղճէք թէ՛ ինչպէս որ պատուիրանը կ'անցնի ու կը զօրէ ամենուն, նոյնպէս և օգնութիւնը. որովհետեւ կը խոստանայ Առաքելոյ, և այն ամենուն որ նոյն բաները կը կատարեն, ասոր համար է որ իր Հօրը ազօթած ատեն կ'ըսէ. «Այլ ո՛չ թէ անոնց (Առաքելոց) հաւար միայն կ'աղաջեմ, հասպա այն ամենուն հաւար որոնք պիտի հաւատասաւ ինձի անոնց խօսիքը» (Յովհ. ԺԷ. 20): Ուստի ամենուն հաւասարապէս կը խոստանայ. «Ո՛ր որ ինձի կը հաւատայ, ինքն ալ պիտի գործե ինչն զործերն զորս ես կը գործեմ. եւ ասոնցս զի աւելի մեծ գործեր պիտի գործեմ» (Յովհ. ԺԴ. 12): Նոյնն է նաեւ ժամանակի մասին, միշտ և ամեն ատեն. «Ամեն օր՝

մինչև աշխարհի վերջը» : Ըսել չուզեք թէ յիս վախճանի աշխարհի մեզի մեզի հետ չպիտի ըլլայ . այլ թէ ան ատեն փառքի մէջ պիտի ըլլանք . «Ահաւասակ Աստուծոյ խորանը մարդիկներու մէջ» . ու պիտի թնակի անոնց հետ . ու անոնք անոր ժողովուրդը , եւ նա անոնց Աստուծոյ (Յայտ . ԻՍ . 3) : Ասոր համար նաեւ Յայտի (Է . 14) կ'ըսէ թէ՝ անոր անունը էմնա-նուէլ պիտի կոչուի , որ կը թարգմանուի՝ Ընդ մեզ Աստուած :

«Մինչև աշխարհիս վերջը» . իբրեւ թէ ըսէր . Հաւատացեալներու սերունդը աշխարհքէ աւելի զօրաւոր է : Քանզի աշխարհ պիտի չկորսուի , մինչև որ ամէն բան կատարուի , այսինքն՝ հաւատացելոց եկեղեցին կա-տարեալ ըլլայ , ե յաւիտենական կեանքի համար Աստուծոյ ընտրեալնե-րուն թիւը լրանայ , որ ունի պատիւ եւ իշխանութիւն յանսահման յաւի-տենից յաւիտեանս : Ամէն :



ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԳԻՐԸ¹

Աթիյե վե Մեզահիպ ցեղաւորի հեղինակներն 11 րեպ. եվկել 1330 վե Ֆիյ 7 Մարտ 1328 քարիս վե 186 ահեսիյլե մուրագգամ քեզգերեհին սուրեքի սիր .

Էրմէնի Գաթիլի Բաքրիգի սապըզը Թէրգետն Պօղոս Էմինի հազգերէրինէ .

Րիւթպէթլու էֆէնտի հազրէթլէրի

Ձաթը վալէալէրիյլէ ճէօմաթ պէնինտէ միւթէքէվլին ինթի-լաֆտան տօլայը՝ թարաֆէյնաէն վուգու պուլան մուրաճաթ վէ չիքեա-եաթ վէ օլ պապտէ իճրոյ գըլլնան թահգըգաթ վէ մուխապէրաթ իւզէրինէ քէյֆիյէթ մէճիսի մախսուսը վիւքէլաճա պիթթէտգիւ , ճէօմաթը մէզքիւ-րէնին չիքեաեաթը՝ բիսգօրօսլարտան միւրէքքէպ Սինոդ մէճիսինին Տէրի սա՛տէթաէ իճթիմար լազըմէտէն իքէն , թարաֆրնլտան Րօմատա էճա-նիպին թահթը թէէսիրինտէ օլարազ իճթիմա իթարիլմէսի , վէ Րօմայա ազիմէթլէրինին մէննի հիւքիւմէթճէ բէսմէն թէպլիզ օլունան բիսգօրօս-լարըն թէհաթամիլ մէքիւսլարլա ֆիրարէն կիթմէլէրինէ սէպէպիյլէթ վէրիլմիշ օլմասը , վէ Սինոդտա սըրֆ ումուրը բուհանիյէտէն պահա օլունա-

¹ Տեղական թերթերը Ամենապ. Թէրգետն Կոթողիկոսին Ի Բաքրիկուրենէ պաշտօ-նանկութեան մասին Արդարութեան նախարարին կողմանէ երեւ հաղորդուած քեզգերեհ եւ իւր առ այս պատասխանագիրը հրատարակած ըլլալով , մենք ալ այս անգամ հրատարա-կութեան կուտանք այս քեզգերեհ , յաւաքիկային թողով միւս յիշատակագիրը :

ճաղը հիւքիւմէթէ պիւտիւրիւմիւ իքէն, ուսուրը ճիւսմանիւյէ վէ էզճիւմէ
ճէօմաաթա ախտ էմլաքըն ուուրէթի իտարէսինէ, վէ Բաթրիգ վէ մէրխասա
ինթիխապաթընա տաիր մուգարէրաթ իթիթիւազ օլունմասը, վէ միւն-
հալ օլան մէրխասալըգլարա պէրաթը ալի վէ մէվատտը հասսիյէ ահքեա-
մընճա ճէօմա'աթ թարաֆընտան ինթիխապ իտիլէճէք իւչ րահիպաէն պի-
րինին Սինուդ ճանիպինտէն ինթիխապը լազըմ օլտուլը հալտէ, տօգուզ
մէրխասալըգա ճէօմա'աթ վէ Սինուդըն ինթիխապաթընա իգթիրան իտիլ-
մէյէրէք, տօղրուտան տօղրույա թարաֆընդտան մէրխասալար թալին ի-
ալիմէսի, վէ գաւլանիյն վէ նիգամաթը օմմանիւյէ թէվֆիգէն իտարէ վէ
միւրազըպէսի Բաթրիգիւսանէ մէճլիսլէրինէ ախա պուլունան էմվալ վէ էմ-
լաքըն պաթընըգա իտտ պէ իտտ վէ քէյֆի մաեէչա իտարէ իտիլմէք իսթէ-
նիլմէսի, վէ ուսուլ վէ թէամիւլէ թէվֆիգէն ճէօմաաթ թարաֆընտան
միւնթէլէպ Բաթրիգիւսանէ մէճլիսլէրինին թանրլմամասը, վէ Բաթրիգ
վէ բիսգօրօս վէ մէրխասա ինթիխապաթընա ճէօմա'աթըն ըէյինէ միւրա-
ճաաթ զայրը մէճպուրի ատտ իտիլմէսի մատտէլէրինտէն միւնպախաօլուպ,
Տիւվանը Հիւմայունտան թաւսիլէն պէյան գըլընտըրը վէճիլէ, Սինուդըն
Բօմատա իճթիմաը, վէ բիսգօրօսլարըն պիլա մէզունիյէթ Բօմայա ա-
զիմէթլէրի հազպինաա թարաֆը վալէալէրինտէն սէրտ օլունան էսպապ
զաթիյէն զայրը վարիտ վէ պու մատտէլէրին միւնատտէ'ի ըէսիլէյէ
իգթիրան իթմէտիկի մալիւմ օլմասընա պիւսէն, էմսալ վէ թէամիւլէ
միւնաֆի օլան շօւ մուամէլաթըն նազարը հիւքիւմէթճէ քէէնէլէմէ-
քիւն տատըյա, պատէզին թէքէրիւրինէ մահալ պրագըլմամասը մուգ-
թէզա պուլունմը, վէ մուամէլաթը սաիրէի միւշթէքիապիհայա կէլինճէ,
թապրիբի վալէալէրինտէ էմվալ վէ էմլաք բաթրիգլիք վէ բիսգօրօսլուգ
րունանի մագամաթընա ախտ վէ միլէթէ րաճի նամլարըյա իքի սինը-
ֆա պիթթագսիմ պիլինճիլինին մագամաթը րունանիյէտէն վէ իքին-
սինին բաթրիգլիք ըիյասէթինտէ իտարէ մէճլիս թարաֆըն-
տան թալին օլունաճազ հէյէթլէր ճանիպինտէն իտարէ օլունա-
ճազը, վէ կէօյեա Փըրգաի մուխալիֆէնին Բաթրիգ ալէյինտէ ի-
լանը խուսումէթ վէ նամլէտլէրին լիսթասընը իսլրազ իթմէք իմթիյազընը
սուի իսթիմալ իլէ եէնի բիսգօրօսլարըն թալինինէ մանի օլմալարընտան
նաչի, պունլարըն պու տէֆալըգ իսթիւնաէն ինթիխապ իտիլտիկի, վէ
էսպազ բաթրիգ Ազարիան էֆէնտի զէմանընաա Բաթրիգիւսանէ իլէ ճէօ-
մաաթ ալաալընտա միւնազըտ մուգարբէրաթը իթիլաֆիյէնին տիանէթէն
զապուլ իտիլմէյէճէյի տէրմէյան. վէ բիսգօրօսլըգ վէ բաթրիգլիք ին-
թիխապաթըյա Բաթրիգիւսանէ մէճլիսինին թէշքիլի խուսուլարընտա
պապը չէրաթի իթիւն իտիլէրէք իսթիլաֆաթ ինտա օլունալըլը անլա-
չըմը օլուպ, Բաթրիգիւսանէ մուամէլաթընըն բաթրիգլիք պէրաթը ալիսի
վէ սալիֆ իւզ զիքը մուգարբէրաթ իթիլաֆիյէ իլէ ուսուլ վէ թէամիւլ
տաիրէսինէ իրճար զըմնընաա նէզարէթի սէնալէրիճէ թարաֆէյնէ միւքէր-

րէրէն վէ սահայը միւսնասիպէ վէ միւսսիրէ իֆա գըրընտըը հալաւ . թէլիֆի պէյն գապիլ օլամայարապ միւթէպէրանը ճէօմաթ թարաֆընտան զաթը վալէպէրինին մուամէլաթը վագըրապընտան տօլայը տէվամը մէմուրիյէթ-լէքինին ճաիզ օլամայաճաղը սուրէթի գաթիյէտէ տէրմիյան զըրընմասընա վէ մուգատտէմա թասվիպի բէսմիի տէվլէթէ իդթիրան իտէրէք . էսլա-ֆընըզ պէմանընտա մէրի օլան մուգարրէրաթը իթիլաֆիյէյի խօտ պէ խօտ քէէննէլէմնէքիւն հիւքմինտէ թութմանըզ , վէ պէրաթը ալի վէ ուսուլ վէ թէամիւլ խարիճինտէ մուամէլաթտա պուլոււմանըզ , տէվամը մէմու-րիյէթլէքիննէ մանի անվալտէն օլմասընա պինաէն , պէրմուճիպի թալէպ վէ իսթիտա ըսգաթընըզլա բաթրիզլիկէ տիկէրինին ինթիխապ վէ թայէրինի-նէ տէկին ուսուլէն իճապ իտէն գայմագամընըն ինթիխապընա ախտ մու-ամէլէնին իֆասը թէպէքքիւր գըրընտըզ վէ պլիսթիզան օլ պուպաէ իրա-տէի սէնիյէի հազրէթի Բատիշանի շէրէֆուուուր պուլուրըլմըն իտուկի պա թէվքէրէի սամիյէ թէպլիզ վէ իզպար պուլուրըլմագլա պէյանը քէյ-ֆիյէթէ իպթիտար գըրընտը :

Իմզա

Ատլիյէ վէ Մէզահիպ նաղըրը
ՄէՄՏՈՒՀ

ԿՐՕՆՔ ԲԱՌԸ

Գերապայծառ Տէր,

Հաճեցէ՛ք, երբ պաշտան դասեմ, Արճագանցի մէջ հրասարակեղ զայս իրր իմ յօրինած Ընդարձակ Կրօնագիտութեան գրքէն նմոյշ մը . եւ եւմ յարգանքօք
Գ. Ծ. Վ. ԱՇԸԳԵԱՆ

Գ

ԿՐՕՆՔԻ ԲԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

8. Հարց. Կրօնք բառն՝ ուսկի՞ց առաջ կ'գայ . կամ ի՞նչպէս կը ստուգարանուի :

Պատ. Կրօնքը՝ կրիմ բայէն առաջ կ'գայ , ¹ ինչպէս Աղաւմէն՝ Աղօն==

¹ Կրօնք բառը՝ կիրք արմատականէն ծագած է ըսել Շանշեանցի հետ՝ իբր թէ «Աստուծոյն ճանաչելն մի հզօր ցանկութիւն է» , (Հմա. Բրիտ. ուսում. հտ. ա.) սխալ է . զի ցանկութիւնը գուցէ կրօնքի շարժառիթ ըլլայ՝ այլ ոչ կրօնք . կիրք բառն իսկ չկայ Ս. Գրոց մէջ :

աղալիք: գողանալէն՝ գողօն=գողցուած իր. թողումէն՝ թողօն=թողուած իր: Կամ կրիմ բայէն, ինչպէս Յրուիմէն Յրրօնք=ցրուիլ:

9. Հ. Կրիմ ի՞նչ ըսել է.

Պ. Կրիմ կը քաշեմ ըսել է. ուստի կրօնք՝ քաշելիք. քաշուած՝ քաշած իր: Հոմանիչ է քէշ բառին. ուսկից կը ծագի քէշիչ=կրօնաւոր. որոնց վրայ պիտի խօսինք իր կարգին (Հրց. 12):

10. Հ. Կրիմ ի՞նչ ըսել է.

Պ. Ծնչուիմ, Շարժուիմ ըսել է: «Այլ ի Հոգւոյն Սրբոյ կրեալք՝ խօսեցան մարգիկ, յԱստուծոյ» (Բ. Պետր. » 21): Ուստի կրօնք՝ շնչուած իր. յայտնուած ինչ՝ ըսել կ'ըլլայ:

Այսպէս կը լսուին առհասարակ Հոգեկիր=Հոգիէ շարժեալ: Այսակիր=սատանայէ դրդեալ անձ: «Եւ չարչարեսցի Իսրայէլ իբրեւ զմարգարէ յիմարեալ. իբրեւ զայր մի այսակիր: (Ովսէէ Բ. 7): Մարգարէք նորա այսակիրք: (Սոփ. Գ. 4):

11. Հ. Կրօնք բառին գործածութիւնը, ի՞նչ նշանակութիւն տուած է անոր:

Պ. 1. Սովորութեան նշանակութիւն. «Եղեւ. ի կրօնս ի մէջ Իսրայէլի, ողբալ զգոռսորն Յեկիթայեայ աւուրց յաւուրս: (Դատ. ԺԱ. 39):

2. Բայց սովորութիւն մի՝ որ Աստուած մը պաշտելու եղանակը կը մատնչէ՝ աւելի ճշդած է անոր նշանակութիւնը: «Պաշտէին զԱստուածս ըստ կրօնից ազգացն զորս Աստուած միութեաց անտի» (Դ. Թագ. Ժէ. 33): «Կրօնք նորա յօտարութիւն համարեցան» (Ովսէէ Ը. 12):

3. Աղանդի իմաստով գործածուած է: «Գիտակ ես ամենայն կրօնից և խնդրոց Հրէից» (Գործ. ԻԱ. 21): «Ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց՝ կեցեալ եմ փարիսեցի: (Գործ. ԻԶ. 5):

4. Վարի իմաստով եւս. «Սի ոք զձեզ խաբեսցէ՝ որ կամիցի խոնարհութեամբ եւ կրօնիւք հրեշտակաց, զոր չիցէ տեսեալ զրահետ վարել»... Զի՞ եւս իբրեւ զկենդանիս աստէն յաշխարհի կրօնաւորիք: Մի՞ մերձենար. մի՞ ճաշակեր եւլն. եւլն» (Կող. Բ. 18) «Եթէ ոք կամիցի կրօնաւոր լինել եւ ոչ սանձահարիցէ զլեզու իւր. այլ զբաղեցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն վայրապար է կրօնաւորութիւն. կրօնաւորութիւն սուրբ եւ անարատ առ ի յԱստուծոյ և ի Հօրէ այս է. այցելու լինել որոց և այրեաց ի նեղութեան իւրեանց, անարատ պահել զանձն յաշխարհէ: (Յկ. Ա. 26):

12. Հ. Կրօնք բառին հոմանիչ ի՞նչ բառեր ունինք:

Պ. Ունինք 1. Քեշ բառը: «Եղծ քէշին Պարսից. (Եզնիկ Կողբացի գիրք Բ. Բ): «Եւ ընդ Պարսից Քէշին գտողան մատիցուք ի պայգար: (անդ. գիրք Ա. ԻԸ): Որ դարձեալ քաշել, կրել բային արմատն է Պարսկերէն: Քէշ=քաշող=կրող: Քէշիչ, կրօնաւոր:

2. Խստոյնականութիւն բառը: «Բանայայապետ խոստովանութեան մե-

րոյ» . (Եբր . Գ . 1 .) Պինգ կալցուք զխոսոյանութիւնն : (Եբր . Դ . 14) :

3. Դաւանութիւն . «Դաւանեցար զբարեք զաւանութիւնն : (Ս . Տիմ . 2 . 12) :

4. Դեն որ Արարաց տն բառն է . (Եղիշէ Բ Յեղեհակ . պատմ . նամակի) :

5. Կէշ . ուսկից ըսուած է պարկեշտ = բարեկրօն :

6. Վարդապետութիւն . «Զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա : (Մատթ . Է . 28)

7. Իմաստութիւն . «Որ յիմաստութիւն իմն համարէ ինքնակամ կրօնիւք են . (Կող . Բ . 23) «Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարելալս . . . զոր . . . մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն իւրով : (Ա . Կորն . Բ . 6) Այս ու հետեւեալները մերձաւոր նշանակութիւն ունին քան թէ համ :

8. Արքայութիւն . «Գործակից եղեն ինձ յարքայութեանն Աստուծոյ : (Կող . Դ . 11) «Նման է արքայութիւն երկնից հատոյ մանանիսոյ (Մատ . ԺԳ . 31 .) «Քարողէր զաւետարանն արքայութեան : Մատ . Դ . 25 .) այսինքն Քրիստոնէական կրօնի աւետարանը :

9. Ուսմունք . «Լցէք զերուսաղէմ ուսմամբ ձերով . (Գործ . Ե . 23 .)

10. Աղանդ . յԱղանդոյ Փարիսեցւոյ . (Մատ . ԺԶ . 12) = Ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ Փարիսեցի : (Գործ . ԻԶ . 5 .) . են . են . Օրէնք . են . են . 12 կրկին :

Հ. Կրօնք բառին հականիշ ի՞նչ բառեր ունինք :

Պ . Ունինք 1. Անկրօնութիւն բառը . որ գրոյց լեզուաւ Անհաւանութիւն գործածուած է յաճախակի :

2. Հեքանոս բառը . որ Յունարէն երևու բառն է . կը նշանակէ ազգք = Լա . ճեկքեա . նաեւ Այլազգի բառը :

3. Անգգամ . «Ասաց անգգամն ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած . ոչ գաղտնի անկրօնութեան իմաստով :

4. Անօրէն . Անբարիչ են . Հայնոյից որ քաղիք տաճկերէն բառին կը պատասխանեն :

Դ

ՈՒՐԻՇ ԼԵԶՈՒԱՅ ՄԷՋ ԿՐՈՆԲ ԲԱՒԷ

13. Հ. Ուրիշ լեզուաց մէջ ի՞նչպէս կը լսուի կրօնք բառը :

Պ . Լատիներէն Religio = րեղիճիօ կ'ըսեն որով շատ մը լեզուներ աւանդ են :

14. Հ. Ի՞նչպէս կը ասուգտաւեն :

Պ . 1. Կրկին ընթերցանութենէ . (a relegendo) «Կրկին կարդալէ կոչուած է Կրօնաւոր . զի Աստուածային պաշտաման պատկանեալները կը

յեղեղէ՝ և իբր թէ կրկին կը կարգայ» (Իզիթորոս. Ստուգան. գիրք. Բ գրին վրայ.)

2. Կրկին ընտելի. (a religendo) «Զի պարտիմք դառնալ և վերստին ընտելի զԱստուած զոր թողած էինք.» (Ս. Օգոստինոս. յաղաքս քաղաքին Սատ. գիրք Ժ. Գլ. Դ.)

3. Կրկին կապելի. a religando «Զի կրկին կը կապէ զմեզ կրօնը՝ Միոյն և Ամենակալին Աստուծոյ» (Ս. Օգոստինոս ի վերայ ճշմարիտ կրօնի.)

4. Պաշտօն հատկանշի (exhibenda religio), ծառայութիւն մասուցանելի, ոճով, բայն առամար religio բառին ծառայութիւն նշանակելէն կ'ըստուգարանեն.

«Զի ոչ միայն անհմուտներու» այլ նաև քաջանմուտներու Լատի-
«նքէն խօսելու ոճով մարդկային ազգականութեանց, այլ և մերձաւո-
րութեանց և ո՛րեւէ կարեւորաց շամար կ'ըսուի exhibenda religio=կրօնի
«Հայերենի ոճով՝ պաշտօն). հատկանշի. Արդ այդ բառին մէջ երկզի.
«մուտիւն չսպրդիր երբ խնդիրն յածի Աստուծային պաշտաման շուրջը,
«այնպէս որ վատահոլութեամբ կրնանք ըսել, թէ կրօնքն ուրիշ բան չէ
բայց եթէ Պաշտօն Աստուծոյ» (Ս. Օգոս. յղքս. քղք. Սատ. գիրք Ժ.
Գլ. Ա.) Ուր դարձեալ. «Կ'երեւի թէ կրօնք՝ ոչ որեւէ, այլ որոշակի Աս-
տուծոյ պաշտօնը կը նշանակէ.

15. Հ. Արաքացիք և բոլոր Իսլամք ինչ բառեր կը գործածեն.

Պ. Ունին 1. Տիկն բառը որ Հայերենի մէջ դեռ բառն է.

2. Ունին նաև իթիզաս բառը, արմատն է ազս. որու համաձայն կը հնչէ Հայերէն իզախս բառը. իրնը ազախս. կրօնադիտութիւն.

3. Մէզհէպ բառը, որ թէպէտ զանիպ օլմապ. միտել արմատէն ա-
զանդի նշանակութիւն պէտք է առայ՝ այլ սովորութիւնը կրօնի իմաստ
տուած է.

ՈՐՄՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԸ

ԿԱՄ ՄԱՍՕՆՈՒԹԻՒՆՆԸ

(Շարունակութիւն ևս վերջ)

Հարկ չկայ շատ հեռուները երթալու, որպէս զի փաստացի ապա-
յոյցներով հաստատանք մեր բառը. Բաւական է օրր օրին հեռուիլ ինչ
քսամենի դէպքեր որ տեղի կ'ունենան այս պահուս Բորգուկոյի մէջ.

Արդի կառավարութիւնը հոն—էտպէս Մասօնական — Հայրենիքի

դաւաճաններ միայն կը տեսնէ ամէն անոնց վրայ՝ որոնք եղբայր կամ հաւակիր չեն։ Դաւաճան՝ գիւղին երէցը, դաւաճան՝ լուսարարը, դաւաճան՝ երկրագործը, դաւաճան՝ մուրացիկը... Եւ անոնց հետ ոչ թէ օրէնքին պահանջած պայմաններով է որ կը վարուին, այլ աղիկամի, քմահաճ խժդժութեամբ։

Լիզպոնայի Մայր Եկեղեցւոյ քահանաներէն մին տասնեակ ամիսներէ ի վեր կը հիւծի մութ բանախն մէջ՝ առանց իր դէմ որոշ ամբաստանութիւն մ'ունենալու։

Չորս հազարէ աւելի քահանաներ բանտ նետուելով զո՛ւր կ'սպանեն հարցաքննութեան։ Չկայ քաղաք մը կամ աւան մը՝ ուր Մասնական գծիղէներ կազմուած չըլլան, մեծու մասամբ այլ և այլ եղեռներով դատապարտուած անձերէ, որոնք անխղճօրէն ձերբակալել կու տան զով որ ուզեն։ Ասոնց մէկ խօսքը բաւ է տասնեակ մը անմեղներ փճացնելու համար։

Այս ձերբակալուած անձերը երբեմն ամբողջ ամիսներ կը ծիւրին՝ առանց հարցաքննուելու, առանց նոյն խոկ տեղեակ ըլլալու թէ ի՞նչ է իրենց ձերբակալման պատճառը։ Ու երբ օրին մէկը հարցաքննութեան կանչուին՝ անոնք հարիւրներով միասին դատարան կը տարուին ու կը դատուին առանց այլեւայլի։ Խեղճերը իրաւունք անգամ չունին գիտնալու իրենց հակառակորդին ո՞վ կամ ի՞նչպիսի մէկ մ'ըլլալը։

Այսպիսի անիրաւութեան մը զո՛հ գնաց Զէնէյրա հրամանատարը, որ ամբաստանուած էր՝ իբր թէ Միապետութեան ինպատո թռուցիկներ ցրուած ըլլար։ Չուր տեղ ան բողոքեց այսպիսի զրպարտութեան մը դէմ, և ուղեց գիտնալ թէ ո՞վ էր զինք այսպէս անուանարկողը։ Առաջին հարցաքննութեան մը դատաւորները չկրնալով ո՛ր և է հակառակ փաստ մը գտնել՝ տրամադրութիւն ցոյց տուած էին անմեղ հռչակելու։ Բայց ահա մասնական Գծիթէն այդ բոլոր դատաւորները պաշտօնանկ ընելով՝ նոր հարցաքննիչ մարմին կարգեց։ Ասոնք իրենց կարգին չուզեցին զուրցել ամբաստանողներուն անունները, ոչ ալ դէմ առ դէմ բերել։ Ինչու որ ասոնք ծանօթ երկու որմնաղիւրներ էին, ու հէքը տասը տարուան տարագրութեան դատապարտուեցաւ։

Բայց ատով չի վերջանար կատաղութիւնը Բորզուկալի Մասնական կատաղութեան։ Չի անոնց ընթացքը վայրագութեան տեսակէտով ամբողջ մարդկութեան համար ամօթալի է։ Աֆսոն Յրանահգի մէջ կը կարդանք այս մասին. «Միապետական կամ կրօնական կասկածով ամբաստանուածներէն բոլորն ալ կը ձերբակալեն. վայրագօրէն կը գանալործեն, կը խլեն մօրուքնին ու մազերը, կը փակեն մէկ ու կէս մեղր երկայնութիւն և մէկ մեղր լայնութիւն ունեցող խցիկներու մէջ, և հոն ամբողջ ամիսներ կը թողուն, առանց գիտնալու պատճառը, առանց քննուելու։ Ո՛չ խեղճերուն կիները կամ զաւակները կրնան այցելել ա-

նոնց, ո՛չ ալ կրնան իմանալ թէ ո՛ւր կը գտնուին իրենց ամուսինները: Այս քաղաքական ձերբակալեալներուն ուտելիք բնաւ չի տրուիր, և կամ շատ շատ աղի ձուկ մը կու տան, և առանց ջուրի կը ձգեն, ստէպ թունախառն ջրոյ շիշ մը կը դնեն առջեւին՝ որպէս զի առելի ստակալի ըլլայ իրենց չարչարանքը:»

Եւ ինչ որ այս պահուստ կը տեսնենք Բորդուկալի մէջ նոյնը գիտենք թէ ըրած է ու կ'ընէ դեռ Մասսնութիւնը՝ Ֆրանսայի մէջ. նոյնը պիտի ընէ Սպանիոյ, Իտալիոյ, Աւստրիոյ մէջ: Եւ ո՞վ գիտէ թէ մենք ալ օր մը չպիտի ենթարկուինք Մասսնական հալածանքին:

Դաւաճաններ, դաւաճաններ պիտի պոռան անոնք այն լատեն մեր երեսին, ու պիտի չխնայեն անարգանքի մը որ չնեան մեր վրայ: Բայց զգո՛յշ. սուրն ու դաշոյնը չէ որ պիտի փրկէ մեզ այդ սև ձեռքի հետապնդումէն, այլ մեր միակ ոյժը պիտի ըլլայ սերտիւ փարիլ Կաթողիկէ Եկեղեցւոյ սկզբունքներուն, առանց վայրկեան մ'իսկ հեռացնելու մեր աչքերը այն փարոսէն՝ որ պիտի ուղղէ մեր դողդոջ քայլերը մութին մէջ, ըսել կ'ուզեմ Կաթողիկէ Եկեղեցւոյ նուիրական Գլուխէն:

Եկեղեցին իր հաստատումէն ի վեր չէ դադրած հալածուելէ: Բայց ան հաստատուն կառչած իր դրօշին՝ իր յաղթական քայլերը եղող Հաւատք, Յոյս, Սէր, հնչեցուցած է անընդհատ մինչև այսօր: Այդ քայլերը սարսափեցուցած է Հռովմէական Լէգէոնները, ան պիտի սարսէ ու յաղթահարէ նաև Մասսնական յայտնի թէ թուրուն բանակները: Հաւատք, Յոյս, Սէր...

ՀՐՈՒՇԱՆ

ՏԱՐՍՈՆԻ Ս. ՊՕԶՈՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Քաղաք 12 Ապրիլ Ն. Տ. 1912

Փաղիւէթիւ միւտիր էֆէնտի հաղբէթլէրի.

Շու ուփածրգ մէզալէնին՝ ումում հաղիւլի էրմէնի Գաթօլիք ճէօմաթընըն թէվէճճիւհիւհիւ գազանմըչ վէ գազանաճագ օլան Կաթողիկէ Արճագանգ ճէրիտէյի մէօթէրէմիւիլին սիւթիւնլարընըն պիր քէօչէսինաէ իլանընը իսթիրհամ էտէրիմ:

Թալուս չէ՛րինին՝ Կիտնէս ըրմաղըյլա, էսկի ճէսիմ պինտ վէ գալէլէրիլէ՛ Ս. Պօզոս ըէսուլըն վաթանը օլտուղու ճիւմլէյէ մալիւմ աիր: Տիւնեայա մալիւմ օլան չէհրիմիլին «արքէօլիճիք» նօղթալարինտան սուրֆը նազար էաէրէք. անճագ պուրատտ եէնի ինչա օլունան՝ պիլիմ էրմէնի Գաթօլիք քիլիսապը հաղբընտա մալիւմաթ վէրմէք իսթէրիմ: Պունտան պիր գաչ սէնէ էվլէլ՝ սէվկիւլիւ Թէրգեան հոգեւոր Տէր հաղբէթլէրի (Ատոնա հալիսկոպուստ իքէն) պիր էսքի վէ աինտար ըրվայթէ հիւրմէթէն՝ չիմտիքի քիլիսամըզըն եէրինաէ Ս. Պօզոսըն աիւնեայա կէլ-

տիկի մահալի քէշֆէն՝ պիր գաշ խոնէլէրի սաթուն ալմըշ խաի: Իշթէ
օլ աշի մահալէ պիր ճէսիմ (Style Gothique) քիլիսա պինասընը պաշլաթ-
մըշ խաի: Նիշէ՝ ֆէտաքեսարլըզլար, նիշէ զահմէթլէր իլէն, Ճէնապը Հազ-
գըն լութֆու իլէ, պինա իքմալ օլտու: Եւրօփալը պիր մահիր միւհէն-
ախսին զայրէթիլէ քիլիսանըն իւզէրի գաբանտը: պախուսուս պէօյիւք
քիլիսա գաբուսուսուն իւզէրինէ վալ օլտունն ճէսիմ փէնճէրէ ճիւմլէ
զիյօրէթճիլէրին հայրէթինի մուճիպ օլմագսա արը:

Ամեն. Թէրպեան հոգեւոր Տէր հազրէթլէրի՝ Կաթողիկոս օլտու
խէ՝ պինա եիւզաէն պրաքըլմատը. զիրա շիմոփքի մէօճթէրէմ վէ զայ-
յուր եպիսկոպոսուսուզ Արհ. Յարութիւն Գերապաշտա Քիքլիքեան՝ թա՝
վէքեալէթի զէմանդնտան պաշլաշարալ, տաթիլի թէզեխնաթ վէ թէր-
թիպաթընր վէրսի՝ ուֆագ տէֆէք նօզսանլարը տախի պու տէֆա՝ մա-
հալի մոզլըզապեսիմիլ թարաֆրիտան իքմալ օլտու: Իմաի, Յի Մարտ,
Մազկազարդ Կիրակիսի, իլք ճաշնուսը Պատարագ, խընճախընճ աշուլի
հազրը օլարալ, մուխանթան սուրէթաէ սուսուլտու: Ժողովրդապետի-
միլ Արսէն վարդապետ Խօրասնեան, սէօլէտիկի Ս. Պատարագըն սէվ-
կիւլիւ Կաթողիկոսըմըզըն վէ մէօճթէրէմ եպիսկոպոսուսըզըն՝ Նիշէթլէրի-
նէ սուսուլաճաղընր Ս. Աւետարան գրաաթընտան սօնրա իրօպար էաէ-
րէք, չօզլարընըն կէօզլէրինաէն եաշլար ազար, զիրա նիշէ թաթլը կէշմիշ
եաաիկեարլար՝ վէ նիշէ հալը հազրտա աճը խաթլըթլէր ֆիքրիմիլի վէ
զալպէրիմիլի իշալ էթմէքաէ խաի: Մէկէր խէ՝ աշի սաաթլարաա՝ աշ-
նի փէտէրիմիլին, աշի քիլիսամըզըն հիմաղիլի վէ ինչա էթտիլէն
Րիւթ. Պօզուս Կաթողիկոսըմըզըն «խաշեցի»սի հազրըլանմագսա իմիշ.
պիլմէզ խաիք. ֆագաթ ալլալըպ ֆիզան էթմէկէ հազրըմըզ վար իմիշ:

Ս. Պատարագ իրթամընտա հոգեհանգիստ պաշտօնը իճրա էտիլաի,
ճիւմլէ քիլիսայր ճէտիաթիմիլին բարերար նիշեցեալարընըն իսթիրաւաթը
րուհու իշիւն: Պաաէհու, Առաջնորդարան սալօնուսա չըզլարագ, մա-
զլըզապեսիմիլին ուֆագ պիր թէքլիֆի իւզըէ, ՉՃ մէճիալէ գատար
պիր խոնէ ճէմ էտիլաի քիլիսա էշեալարըմըզըն նօզսանլարըմըզըն իքմալը
իշիւն: «Ախ... հոգեւոր Տէր հազրէթլէրի՝ պուրատա օլտա վէ պու զիյ-
նէթէ րիաաթէթ էտէրէք, էմէքլէրինն մէյվէսինի կէօրսէ խաի» թէֆէքթիւ-
րիւ իլէ, եավաշ եավաշ աշուլի թաթլը պիր թէէսիլ ալթընտա խոնէլէ-
րինէ տվաէթ էթտիլէր:

Եազընլարաա, Ատանա եպիսկոպոսուսուզ Արհ. Յարութիւն Գե-
րապաշտա էֆէնտիմիլ պուրայր թէշրիֆլէ՝ թէրթիպաթը գաթիլէաէն սօն-
րա օծում արարողութիւնու տախի իճրա էտէճէքլէրի՝ մուհագագ տըր:
Ինչալա՜ օլ թաթլը զիյնէթը ալիշանըն տախի՝ զաիֆ գալէմիմ իլէն իլա-
նընը ճէրիտէյի մէօճթէրէմիլիպտէն րէճա խաէճէյիմ:


Թարաուս Էրմէնի Գաթօլիք ճէօմաթընտան

ՊԵՏՐՈՍ ՔԷՕՐՕՂԼՈՒԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՈՎՄ


Հատկական տոներու աթիւ Առաջին Հաղորդութեան մօտեցող երկսեռ տղաքը տնցեալներն իւր Օգոստոսական ունկնդրութեան ընդունեց Սրբազան Քահանայապետն մեր Պիոս Ժ. Երեսնամեակի տօնակատութեամբ խելահաս ամենափոքր տղայոց իսկ Հաղորդութիւն Օ. Սեղանայն մասնակցութիւնը ընդհանուր աշխարհի Կաթողիկէից մասնաւոր կոնդակաւ և մեծաւ եռանդեամբ յանձնարարեց: Հիմա Նորին Սրբութիւնը այս անմեղ զառնակներուն տեսութեամբը ի սիրտ և ի հոգի կը խնդայ, ինչպէս Տէրն մեր Յիսուս Քրիստոս, երբ մանուկներն իր Աստուածային գիրկն տաւ և օրհնեց և հրամայեց մանուկներու նմանիլ, իրը պայման արքայութիւն մտնելու: Այս ունկնդրութեան մէջ տոյն երանելի մանկիկներն (մինչև փեց տարեկաններ կային) սրնք իրենց սրտին մէջ օթեւանած էին զթագաւորն թագաւորաց, շուրջ երեք հազար էին, Հռովմայ այլեւայլ ժողովրդապետութիւններէն, ծագկապակ և ապիտակազեւոտ, ընկերացած իրենց ժողովրդապետներէն, մայրապետներէն, ևն: Քահանայապետին յարկաբաններն ընդարձակ սրահներուն մէջ բաժնուած կը սպասէին. և մերթ ընդ մերթ մանկական արծաթի ձայներով սխալաշին ճառագողներ կը հնչէին այն գեղարուեստ գոհարներուն մէջ, մեղեդիներով երգերով ի փառարանութիւն այն Սիրոյ Աստուծոյն զոր իրենց սրտիկներուն մէջ ընդունել էին: Սըրբազան Քահանայապետը, քովը ունենալով իր փոխանորդը՝ Կարգ. Բէսպէկի և այլ բարձրաստիճան եկեղեցական և աշխարհական պաշտօնատարներ, անցաւ սրահներուն մէջէն, շոյելով և օրհնելով այն հրեշտակիկները, որոնք սպառնալ կը գիտէին զինքը, և իրենց թաթիկներով կը ծափահարէին խոնդափառ: Նորին Սրբազանութիւնը կը յորդորէր զանոնք աշակէտ բարի մնալ ինչպէս էին այս երջանիկ ու անմահական առաք մէջ, Այսպէս Երեսնամեակի տօնակատութեամբ Հայրիկը մէն մի գահիճին մէջէն դիմարու տնցնելով — զի մանկիկներն կը փառէին իրեն և չէին ուզեր բաժնուիլ —, և ամենքն ալ ուրախութեամբ լեցնելով, մեկնեցաւ իւր գրասենեակը:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Ի Բարեկ Վախճանած է գրեթէ ութսուն ամեայ վաստակարեկ ծերունին Ս. Սարոյ, Դաղղիայ Կաթողիկէ հրապարակալիրներուն համաժողովին նախագահը, Ամենաբարի քրիստոնեայ մը եղած էր ամէն բանէ առաջ: Իր աշխատանաց ու կեանքին մեծ զաղափարը եղաւ բոլոր Կաթողիկէ լրագրապետներն ու խմբագիրները ի միութիւն զօգել, և այս մեծ գործը կատարուեցաւ յամին 1889. և Դաղղիայ մէջ մասնաւորապէս հիմնեց Կաթողիկէ բոլոր մատենագիրներու և թերթերու ընկերակցութիւնը, որ ցարդ իւր տեսակին մէջ ամէնէն ծաղկեալն է: Այս բարի քրիստոնէին վախճանն ալ երջանիկ եղաւ, Ս. Եկեղեցւոյ խորհրդոց ընդունելութեամբ և ամէն կերպ հոգեւոր մխիթարութեամբ:

* * Բորբուկայի մէջ հայածուր կը շարունակէ առանց թուշնալու: Էփորայի եպիսկոպոսը կառավարութեան տնդամ օրէնքներուն և մանտանգ պաշտամանց կոչուած ժողովներուն (Caxelles) գէմ Հովուական մը գրած և բողոքել տուած էր իր ժողովրդեան մէջ: Կառավարութիւնը լսած էր զայս, բայց Հովուական թղթէն և ոչ մէկ օրինակ կրցեր էր ձեռք ձգել: Ուստի Արդարութեան Քարտուս (Ֆարմասոն) նախարարն Մամէրոս ստիպուեցաւ հարցափորձել յանցաւոր (°) եպիսկոպոսը, որ անողայլ պատասխանեց՝ զԱյո՛ն, և... երկու տարուան աքտորքի դատապարտուեցաւ:



ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Անցեալները նորարաց կղերանոցի մէջ ժողովուած պատանիները դժպէսի դէպքերու քերամբ եւ առաքուած էին կամ անոնցմէ քանի մը հատը ուրիշ դպրոցներու մէջ դնելու հարկ գոյացած էր: Եկեղեցական վիճակի բողձանք յայտնող նոր և հին աշակերտները և մերածէս կրթութեամբ դաստիարակելու համար որոշուեցաւ նորէն ի մի խմբել, որչափ ալ տեղւոյն անձկութիւնը զգալի կերպով նեղութիւն պիտի առնէ, սակայն և այնպէս տալապային ուսեալ և բարեկերթ եկեղեցական դասու մը յաջորգութիւնը անհրաժեշտ դարձած ըլլալ, ուէ գոհորութիւն չպիտի խնայուի:

* * Անկիւրիոյ եկեղեցական և աշխարհական դասէն անդադար շնորհակալութեան թուղթիւր կու գան և զգացումներ կը յայտնուին առ Ամենապ. և Գերերջ. Հոգեւոր Տէրն՝ անոր համար որ ամէն տեսակ դժուարութեանց յաղթելով արժանաւոր հովիւ մը շնորհեց այն փառապանծ Աթոռին և հաւատացեալ ժողովրդեան: Ի մէջ այլոց նաև տեղւոյն Անաբատ Եղբայր Մայրապետաց ընդ. Մեծաւոր Մայր՝ Բոյր Ֆրանչէսքա, յանուն իւր միաբանութեան, շնորհակալութեան նամակ մը գրեր է, որմէ կը քաղենք հետեւեալ պարբերութիւնը: «Այ մոռցանք մեր քաջած նկողնքիւններն ու միփրարուցանք. վասն զի ունինք անանկ գրած ևւ արդար հայր մը, որ սկսաւ գալստեան առջի օրէն իւր սերը ցուցնելու իր ժողովրդեան, և նմանապէս մեր փոքրիկ հասարակութեան: Փա՛նք, հապա՛ր փառք, քիւրճիս գոհութեան զգացումներն, որոյ օգուտուած կ'աղօթենք միշտ ընդ միշտ և կը խնդրենք զնրազին պաղատանք որ Աստուծոյ և Սրբոյ Սրբոյնքն ալ միփրարե ժողովրդեան խաղաղութեանը և քաղի ընթացիւն»:

* * Դերբ. Աշրգեան Գր. Ծ. Վ. պիտի երթայ աշխատելու Ատանայի վիճակին մէջ, ուր մեծ ապարեզ մը կայ իւր առաքելական փաստակոց:

* * Վեր. Հ. Աւետիք Վ. Գաղեղեան, Մխիթ. Վենետիկոյ և ժողովրդապետ Նիկոմիդիոյ Հայ-կաթողիկէ Հասարակութեան, եկած է Վ. Պոլիս, Ամենապատ. և Գերերջ. Հոգեւոր Տեսառն հրամաններն առնելու իւր վիճակին ինչ ինչ գործերուն նկատմամբ:

* * Վեր. Հ. Բառնարատ Վ. Պիլէգիկեան, Մխիթ. Վիեննայ, այս օրերս հասաւ Վիեննայէն ի Վ. Պոլիս, իւր ծննդավայր, քանի մը ամիս օգափութութիւն ընելու համար: Հ. Բառնարատ, որ Առաջիկայի պաշտօնն ունի Մայր Վանքին մէջ, իւր հեղահամբայր և խիստ համակրելի բնաւորութեանը գրուած է ընդհանուր յարգանք և սէր:

* * Առ Պատ. Խմբագրապետ «Արմազան» քերթի. Կը խնդրուի հաճեալիս հրատարակել հետեւեալ ծանօթութիւնը. —

Անցած անգամ Ս. Զատիկ առիթ կեդրոնական քանիսի վրայօք գրած համառօտ տեղեկագրութեան մէջ զանցառաքար մոռցած եմ յիշել զհրատարակական օգնութեան ֆանկոնքիւնը զոր ևս քաջիւնցի քանսարկեալներուն, որ հր ճշդիւ երեք հարիւր դանկակ, ի քաջ առեալ չեօրեք, հաւկիւր ևւ այլ կարեւոր ծախիւրը, որոնցմով ընդ ամէնը շուրջ յորս հարիւր դանկակ գումար մը ծախսուեցաւ:

Հաւատանք միմարանց եմ

Հարարիս

7/20 Ապրիլ 1912.

ՅԱԿՈԲ Վ. ՄԱՂԱՐԵԱՆ

Հոգրոճ. Յս. Փրկիչ Մ. Եկեղեցւոյ
և կեդրոնական քանիսի.


ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Էջմիածինէն եկած հեռագիր մը կ'ընտցնէ թէ Զարը վաւերացուցած է Տ. Գերբ Արքեպ. Սուրենեանցի ընտրութիւնը իւր Կաթողիկոս:

* * Ամենապ. Արշարունի Պատրիարքը մասնաւոր և կարուկ նամակաւ մը պաշտօնունկ ըրեր է Պատրիարքական փոխանորդ Տ. Ղեւոնդ Ծ. Վ. Դուրեանը, որ այս անուկընկալ գործը կը պահարակէ իւր անկրու, կատարուած սագրանօք իր թշնամիներուն Պատրիարք իրեն փոխանորդ կարգեց Երուսաղ. Ծ. Վ. Բերտահեանը:

* * Էփագֆի նախարար Խայրի պէյ մէկ քանի օր առաջ յայտարարած է Երուսա-

ղէմի Պոլսոյ Պատր. փոխանորդ Մաքսա վարդապետի թէ Եւտի-Գուլէի ագարակի խնդիրը իրենց համար վճռական կերպով վերջացած է և թէ ու է զօրութիւն չկրնար ունենալ փաստաբանական ցանձնաժողովին կողմէ կատարուելիք ու է ձեռնարկ: Գաղազեան վրդ. հաղորդած է զայս Ս. Պատրիարք Հօր:



Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Օսմանեան Խորհրդարանի Բ. բացումը հանդիսաւոր արարողութեամբ կատարուեցաւ Ապրիլ 5ին Սալը Բազարի պալատին մէջ. ներկայ երեսփոխաններու թիւնը 107 էր, բոլորն ալ իթթիհատի կուսակցութիւնէն: Ժողովարարահին ինը օթեակներէն առաջինը յատկացուած էր Սուլթանին. իսկ միւսները կոյսերագուն իշխաններուն, բարձրատախճան իւլէմաներու, Քրիստոնեայ հոգ. պետերուն, զինուորականներուն և այլք ըստ կարգի: Ծերաւ կուսականներն ալ իրենց պաշտօնական զգեստներով ժողովարարահին ձախ կողմի նստաւորանները գրաւած էին:

Կէս օրէն վերջ ժամը շուրջ 2.10ին հասաւ Սուլթանը իր հետեւորդ կոյսերագուն իշխաններով, և իր օթեակը գնաց բարեւելով ներկայները:

Յետոյ խալիա Ձիյա պէյ, սպորական արարողութեան համաձայն, վարդապետ Սալիտ փաշայի բերաւ կարմիր Սնդուսի մէջ փաթթութեամբ գահաճառք. զոր նա յարգալից ընդունելով և համբուրելով զողջաջ ձախն մը կարգաց ընդհ. լուծեան մէջ:

Սուլթանը իր այս գահաճառքին մէջ նախ իշխելով թէ ինչպէս կառավարութեան և օրէնսդիր իշխանութեան միջեւ ծագած անհամաձայնութեան պատճառաւ երեք տմիս առաջ լուծել հրամայած էր Երեսփ. Ժողովը. անցաւ յոյս յայտնելու թէ անշուշտ ներկայ ժողովը պիտի համակամեր կառավարութեան՝ Սահմանադրութեան օրէնքներուն բարեփոխելի մասերն ընդունելով: Ներքին կացութեան վրայ խօսելով, կ'ըսէր թէ ժողովուրդին տմէն տեսակետէն յառաջդիմութիւնը ու երկրին բարգաւաճումը կախումն ունի արդարութեան և հաւատարմութեան կանոններու կատարելապէս գործողութենէն. որ բանը յաւջողցնելու համար, կը յաւելուր, մասնաւոր յանձնաժողով մը զրկուած է արդէն Ռումէլի նահանգները, իսկ Անատոլիոյ զրկուելիք յանձնաժողովին և անոր բուն նպատակի մասին նոյնպէս խոստովանելից կերպով կը խօսուէր Գահաճառքին մէջ:

Անատոլիոյ և Ռումէլիի զանազան կողմերը շինուելիք երկաթուղիներու ծրագիրներն ալ, ինչպէս նաև Եմէնի և Ասիոյ խնդիրներու խաղաղութեամբ վերջանալը, Սոմոսի իշխանին եղբորական դէպքը, և կրեաւէի համար Անգլիոյ, Ֆրանսայի և Ռուսիոյ առեւծ ապահովութիւնները, մեծ տեղ կը զբաղէին գահաճառքին մէջ:

Սուլթանը հաճախով կ'աւարագծէ պատերազմական ոյժին վերջին յառաջդիմութիւնները. իսկ արտաքին քաղաքականութեան համար յոյժ լուսատես գաղափարներ կը բողբանդակէ գահաճառքը:

Պարսկական սահմանագլխի խնդրոյն կարգադրութեան համար, կ'ըսուի հոն որ, եթէ բանակցութիւնները վիժին՝ Օսմ. կառավարութիւնը որոշած է Լահէյի իրաւարար աստեանին առջեւ հանել խնդիրը:

Խոսովիոյ ներկայ անիրաւ պատերազմին վերջ տալու միտով պայմանը զոր պիտի ընդունի Օսմ. կառավարութիւնը, կը յարէ Գահաճառքը, վեհապետական իրաւունքներու գործնականապէս և ամբողջովին պահպանմամբ միայն կարելի է ըլլալ: Սոյն խօսքերը բուն ծափերով կ'ողջունուին:

Վերջապէս Գահաճառքին ընթերցումը կ'աւարտի պատերազմի մէջ մեռնող զինուորներու հացքէին ուղերձով մը և համերաշխութիւն մաղթելով երկրի բաղկացուցիչ տարրերուն:

Գահաճառքին ընթերցումը 10 րոպէ միայն տեւեց, որմէ վերջը նազիպ իւլ-էշրաֆ էֆ. արարեքէն աղօթք մը արտասանեց, իսկ ծերակուտական Սանսաթըրը Իմաիլ Հապքը էֆ. Թուրքերէն խիստ պերճաբոս աղօթք մը, որոնց Սուլթանը ձեռքը բաց և ուշադիր կը հետեւէր:

Շատ չանցած կայս, օթեակը պարապ էր, Սուլթանը երեսփոխաններուն և օթեակ-ներէն իւրաքանչիւրին առանձինն բարեւներ ընելէ ետք խանդավառ ցոյցերու մէջտեղ մտնած էր:

Ստիտ փաշա ժամը 3.5ին բեմին վրայէն արտասանեց երգման քանոճեւը. «Յանուն Աստուծոյ կ'երգնում հաւատարիմ մնալ Սուլթանին և Սահմանադրութեան», և երեսփո-խանք «Վալլահի» գոչեցին միտերան:

Գաղթէմունի երեսփոխան Հօճա Ահմետ Մահիր էֆ. նախադասական աթաբէկը, և տարիքով փոքր է երեսփոխաններ առանձնեցին առժամայ քարտադարի պաշտօնը:

Բնարուած երեսփոխաններուն թիւն էր 143, ներկայներն էին 107: Եւ որովհետեւ Նախագահի բնարութեան համար մեծամասնութիւն պէտք էր, մինչեւ որ այն գոյանար՝ ժողովին խորհրդակցութիւնները յետաձգուեցան:

* Իտալական նաւատորմը Ապրիլ 5ի առաւուն սկսեւ ռաբակոծել Տարաանէլի երկու տմենէն յառաջացած ամրոցները, Դուս-Դալէ և Սէտտ-իւլ-Պահր:

— Յետագայն առնուած լուրերու համաձայն, յիշեալ երկու ամրոցները ծանր փնտա-ռած են ու բաւական անձի կորուստ կայ: Կ'ըսուի թէ թշնամին շուրջ 300 ռումբ նետած է: Իտալական մարտանաւ մը փնտառած է ծանրապէս:

— Մալաքադաքի մէջ այս լուրը իր հակադդեցութիւնն ունեցաւ ուստեսեղէնե-րու ֆնայն տարօրինակ բարձրանալով:

— Նեղուցը թօրփիլերով դոցուած ըլլալով արգիլուեցաւ բոլոր նաւերուն ալ անկէ անցնիլը: Կ'ըսուի թէ մօտ օրերս պիտի բացուի:

— Իտալական տորմիդը քաջուած է Եգէական ծովու մէջ ուր մերթ ընդ մերթ իր ներկայութիւնը յայտնի կ'ընէ ցոյցեր կատարելով առդին անդին: Կ'ըսուի նաեւ թէ նոյն ծովու քանի մը կղզիները պիտի գրաւեն Իտալացիք:

* Այն օր ռուսական նոր զեպան Մ. աը Կիրս նմանը չտեսնուած հանգիստու-րութեամբ մը ընդունուեցաւ Կայս. Պալատին մէջ, Օսմ. կառավարութիւնը Ռուսիոյ հան-դէպ իր ունեցած բարեկամական վերաբերմունքին մէկ տպացոյցը տալու համար բացառիկ կարգապարտութիւններ ըրած էր: Այսպէս՝ Կայս. պալատէն քառաձի ասկեճամազ կառք մը զրկուած էր թօգաթխան, ուր առժամաբար կը բնակի Մ. աը Կիրս: Կայս. պալատան ա-րարողապետ Իսմայիլ ձէնանի պէյ և զեպանը նոտան քառաձի կառքին մէջ, որուն կը հետեւէին 10է աւելի պալատական կառքեր, որոնց մէջ նստած էր զեպաննատան ամբողջ պաշտօնէութիւնը: Կառքերուն քովէն կ'երթային զեպաննատան զբաւոտանները: Կայս. Պալատին մէջ զեպանը դիմաւորեց Սրտաքին Գործերու նախարար Արմ պէյ, որ ընդու-նեղութեան զահչիճը առաջնորդեց Մ. աը Կիրս և զայն Սուլթանին ներկայացուց, Մ. աը Կիրս Պաշտօնական ճառ մը արտասանեց, որուն պատասխանեց Սուլթանը: Ապա զեա-պանը իր հետեւորդները ներկայացուց Սուլթանին, և միեւնոյն հանդիսաւոր թափօրով զեպաննատան գործաւ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Յես Ս. Յարութեան	177
Արդարութեան Նախարարին գիրք	180
Կրօնի բառը	182
Որմնադրութիւն	185
Տարսոնի Ս. Պողոս եկեղեցին	187
Տեղեկագրականք	189

ԱՐՏՕՆԱՏԼԻՐ
ՅՈՎԶ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏԵՕՐԷՆ-ԽՍՐԱԿՐԱՊԵՏ
ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՂԻՍԿԱՆԵԱՆ

Տպագր. Օսմանեան Դորձակցական Ընկ. Լպուստուոս Եմեստի Նօ. 27



«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի պատօնական Շաբաթաբերքը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ առ այժմ 16 մեծադիր էջերէ բաղկացած եւ ճոխ բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյգ ամէն յուրերն՝ համառօտուած . որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերք կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար	
Տարեկան	Դնէկ . արծ. 40
Վեցամսեայ	» » 20
Արտասահման	
Տարեկան	Ֆրանկ 10
Վեցամսեայ	» 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին *Մանսա-Բոսոյ* եւ կամ մէյ մէկ դրունոց նամակագրութեամբ :

Մէկ թիւ 1 Դահեկան



Նամակ , յօդուած . եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց
Բերա Կ. Պոլիս

Katoghighe Arzakank
Patriarcat Catholique
Péra Constantinople

- ԾԱՆՈԹ.— 1.— Արձագանց կը հրատարակուի շաբաթ օրերը:
2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:
3.— Չեռագիրներ եւ չեն դարձուիր:
4.— Յօդուածներու ձեռագիրներ պէ՛տ է գրուած ըլլան բուրձին մէկ կողմը միայն:
5.— Ծանուցմանց նամար մասնաւոր պայմանագրութիւնք կրկնաւորուին:

